ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կառավարության տարեկան հաշվետվության մասին

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կառավարության տարեկան հաշվետվության մասին եզրակացությունը ներկայացվում է ի կատարումն ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի, «ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի, 6-րդ հոդվածի 3-րդ մասի, «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների:

2016 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության համաձայն (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել են (առանց արտաբյուջետային միջոցների) 1,186,250,114.5 հազ. դրամ, ճշտված ծրագիրը 1,238,801,120.8 հազ. դրամ, իսկ փաստացի հավաքագրվել է 1,137,312,226.8 հազ. դրամ, որը ծրագրի և ճշտված ծրագրերի նկատմամբ համապատասխանաբար կազմում է 95.9% և 91.8%: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը (ներառյալ արտաբյուջետային միջոցները) կազմել է 1,278,494,116.6 հազ. դրամ, իսկ փաստացի եկամուտները՝ 1,171,107,264.8 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 91.6%:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները (ներառյալ արտաբյուջետային եկամուտները) 2015 թվականի փաստացի եկամուտներից ավելի է 3,363,241.6 հազ. դրամով կամ 0.3%-ով: **2016 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 23.1% (2015 թվականին՝ 23.2%):**

Օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն, արտաբյուջետային միջոցների հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվել են ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվել են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի պետական տուրքերից փաստացի մուտքերը կազմել են 33,309,914.0 հազ. դրամ, ճշտված ծրագրի 33,537,843.4 հազ. դրամի դիմաց՝ ապահովելով տարեկան ճշտված ծրագրի 99.3% կատարում:

2016 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել «Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար» 816.6 մլն դրամ պետական տուրք: 2015 թվականի նոյեմբերի 24-ի «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՕ-120-Ն ՀՀ օրենքով լիցենզավորման ենթակա գործունեության որոշ տեսակներ, սահմանվել են որպես օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեության տեսակներ: Օրենքով պետական տուրքի առանձին ծրագրային ցուցանիշ նախատեսված չէ և վերնշյալ օրենսդրական փոփոխությանը համապատասխան ճշգրտում չի կատարվել ՀՀ Կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1555-Ն որոշման 6-րդ հավելվածով հաստատված պետական տուրքի տարեկան մուտքերի հավաքագրման եռամսյակային (աճողական) համամասնություններում: Մինչդեռ, նշված օրենսդրական փոփոխությունը հաշվի առնելով 2016 թվականի պետական բյուջեի եկամուտներում վերոնշյալ մուտքերի համար իրականացվել է առանձին հաշվառում:

2016 թվականին պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից ստացվող շահաբաժինները ծրագրվել են 568,100.0 հազ. դրամ, տարեկան ճշտված ծրագրով՝ 768,950.5 հազ. դրամ, իսկ փաստացի մուտքը՝ 1,736,176.8 հազ. դրամ: Ճշտված ծրագրից փաստացի կատարված վճարումների նման շեղումը, ըստ Հաշվետվության, պայմանավորված է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի

կողմից՝ ծրագրավորված 47.0 մլն դրամի դիմաց ՀՀ պետական բյուջե փաստացի կատարված 915.1 մլն դրամի վճարով, 2015 թվականի գործունեության արդյունքներով արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից շահույթ ունենալու, ծառայությունների մատուցման բավարար սակագին ունենալու փաստով, ինչպես նաև որոշ կազմակերպությունների՝ նախորդ տարիների պարտավորությունների մարումներով:

2016 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Օրենքով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել են 1,376,993,040.5 հազ. դրամ, որոնք 2016 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 82,047,828.1 հազ. դրամով: Արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը կազմել է 1,459,040,868.6 հազ. դրամ, որը ներառում է 34,926,666.8 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը: Ծախսերի ճշտված ծրագիրը, առանց արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսի, կազմել է 1,424,114,201.9 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը, ներառյալ 27,076,931.5 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը, կազմել են 1,449,063,604.1 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 105.2%-ը, իսկ ճշտված ծրագրի 99.3%-ը: 2015 թվականի համեմատ, 2016 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 2.8%-ով: 2016 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 28.6%՝ 2015 թվականի 28.0%-ի համեմատ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ծրագրերի թվաքանակը 729-ն է:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ծրագրերի (գործառական դասակարգմամբ) կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով քսանմեկ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրով նախատեսվել է 13,742,049.6 հազ. դրամ, չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել,

2. թվով յոթ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը Օրենքով նախատեսվել է 211,698.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով զրոյացվել են,

3. թվով երեսունհինգ ծրագրեր գերակատարվել են: Ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 113,505,835.2 հազ. դրամ. ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 52,051,022.4 հազ. դրամի չափով:

4. թվով երեսունհինգ ծախսային ծրագրերով (այդ թվում՝ 21-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը):

5. թվով վաթսուն ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն, ճշտված ծրագրով նախատեսվել են 51,589,882.2 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել են 37,618,903.8 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 72.9%: Այդ վաթսուն ծրագրերից երեսունը դրամաշնորհային ծրագրեր են (որից՝ տասնմեկը արտաբյուջետային ծրագրեր են), որոնց փաստացի ծախսը կազմել է 5,006,335.3 հազ. դրամ, իսկ վեցը՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների միջոցների հաշվին ֆինանսավորվող վարկային ծրագրեր, որոնց փաստացի ծախսը կազմել է 5,129,931.0 հազ. դրամ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասնմեկ բաժիններից իննում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» բաժնում՝ 75.7%:

2016 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 8,000,000.0 հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 8,094,836.9 հազ. դրամով և ճշտված ծրագիրը կազմել է 16,094,836.9 հազ. դրամ: 2016 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 15,132,217.2 հազ. դրամ: 2016 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից 39.5%-ը ուղղվել է նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին: 2016 թվականի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի գերազանցում նախատեսված ծախսերի 5%-ը, այն կազմում է 1.1%:

Ըստ Հաշվետվության, 2016 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն, պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 27,076,931.5 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 77.5%-ը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հավաքագրված միջոցները մուտքագրվել, հաշվառվել և շրջանառվել են արտաբյուջետային հաշիվներով: Դրանով իսկ խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «Ա» ենթակետով սահմանված բյուջետային համակարգի միասնականության սկզբունքի դրույթները:

2016 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ

2016 թվականին պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է 190,742,926.0 հազ. դրամ: Ճշտված ծրագրով այն նվազել է 10,196,174.0 հազ. դրամով՝ կազմելով 180,546,752.0 հազ. դրամ: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 277,956,339.3 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածի 145.7%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով նախատեսվածի՝ 154.0%-ը: 2015 թվականի համեմատ, 2016 թվականին պակասուրդի մեծությունն աճել է 15.2 տոկոսային կետով:

2015 թվականի համեմատ, 2016 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներն աճել են 854.1%-ով, իսկ արտաքին աղբյուրները նվազել են՝ 25.7%-ով:

2016 թվականին պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 5.5%՝ 2015 թվականի 4.8%-ի համեմատ:

2016 թվականին ԾԻԳ-երի բոլոր հաշիվները վարվել են գանձապետական միասնական հաշվում և 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԾԻԳ-երի հաշիվների մնացորդը կազել է 39,282.23 մլն դրամ: ԾԻԳ-երի ենթահաշիվները վարվում են գանձապետարանի կողմից, սակայն միջոցները տնօրինում է կառավարման մարմինը:

2016 թվականի ՀՀ պետական պարտքը

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,942.1 մլն ԱՄՆ դոլար (2,875.6 մլրդ դրամ), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 4,805.59 մլն ԱՄՆ դոլար (2,325.62 մլրդ դրամ), որից՝ 4,300.9 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունն է, իսկ 504.7 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ)՝ պարտավորությունը: ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 1,136.5 մլն ԱՄՆ դոլար (550.0 մլրդ դրամ):

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5- րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, ՀՀ կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60%-ը: Իսկ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5- րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, եթե ՀՀ կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է նախորդ տարվա ՀՆԱ-ի 50%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՀ ՀՆԱ-ի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 2015 թվականի ՀՆԱ-ի 52.29%-ը և նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը աճել է 6.19 տոկոսային կետով: Պահպանվել է օրենքի 6-րդ կետի պահանջը, սակայն փաստացի ցուցանիշը գերազանցում է 50%-ի սահմանը:

2016 թվականի ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 80.9%, ՀՀ ներքին պետական պարտքը՝ 19.1%: 2015 թվականի համեմատ, 2016 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը աճել է 4.13 տոկոսային կետով:

2016 թվականի ՀՀ ներքին պետական պարտքը

ՀՀ ներքին պետական պարտքի կառուցվածքը 30.12.2016 թվականի դրությամբ հետևյալն է՝

1. 500.3 մլրդ դրամը կամ 91.0%-ը՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր են, որը գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը 56.3%-ով:

2. 46.3 մլրդ դրամը կամ 8.4%-ը՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերն են, որը պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից 2.3%-ով:

3. 3.4 մլրդ դրամը կամ 0.6%-ը՝ ներքին երաշխիքներ, որը գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը 240.0 %-ով:

2016 թվականին ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 42.0 մլրդ դրամ կամ նախատեսված ցուցանիշի 99.6%-ը, որը պետական գանձապետական պարտատոմսերի գծով սպասարկման ծախսն է: Հաշվետու տարվա ընթացքում նկատվել է աճ ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ ներքին պետական պարտքի սպասարկման ծախսը աճել է 9,901.0 մլն դրամով կամ 30.8%-ով:

2016 թվականին ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսում ներառված չեն ռեզիդենտների կողմից ձեռքբերված 46.3 մլրդ դրամի արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը և այն, «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 1) կետի համաձայն, պետք է ներառել ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսում:

2016 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքը

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը 30.12.2016 թվականի դրությամբ հետևյալն է՝

1. ՀՀ կառավարության արտաքին վարկեր և փոխառություններ՝ 3,380.0 մլն ԱՄՆ դոլար կամ 70.33%:
2. Արտարժույթով պետական պարտատոմսեր (ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված)՝ 904.4 մլն ԱՄՆ դոլար կամ 18.82%:

3. Պետական գանձապետական պարտատոմսեր (ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված)՝ 16.5 մլն ԱՄՆ դոլար կամ 0.35%:
4. Կենտրոնական բանկի արտաքին վարկեր և փոխառություններ՝ 504.7 մլն ԱՄՆ դոլար կամ 10.5%:

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի գծով ստացումները

2016 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ստացումները (ներառյալ արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները) կազմել են 645.3 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարությունը ստացել 570.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ԿԲ-ն՝ 74.4 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության ստացումները 2016 թվականին, նախորդ տարվա համեմատ, նվազել են 36.4%-ով, քանի որ 2016 թվականին արտարժութային պարտատոմսեր չեն տեղաբաշխվել:

2016 թվականին ՀՀ կառավարության ստանձնած 570.9 մլն ԱՄՆ դոլար (272,104.3 մլն դրամ) արտաքին պարտավորությունները ամբողջությամբ արտաքին վարկերի գծով ստացումներն են, որից ոչ նպատակային վարկերի գծով ստացումները կազմում են 256.3 մլն դոլար կամ ընդհանուրի 44.9%-ը, իսկ նպատակային վարկերի գծով՝ 314.6 մլն դոլար կամ ընդհանուրի 55.1%-ը, :

2016 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը

2016 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսը կազմել է 230.1 մլն ԱՄՆ դոլար (104.5 մլն ԱՄՆ դոլար մարում և 125.6 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ), որից՝ ՀՀ կառավարության սպասարկման ծախսը կազմել է 189.8 մլն ԱՄՆ դոլար (118.8 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 71.1 մլն ԱՄՆ դոլար մարում), իսկ ԿԲ-ինը՝ 40.2 մլն ԱՄՆ դոլար (6.8 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 33.4 մլն ԱՄՆ դոլար մարում): ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի սպասարկումը

16.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 8.0%-ով նվազել է Օրենքով սահմանված ցուցանիշի համեմատությամբ:

2016 թվականին վճարված 118.8 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներում 65.7 մլն ԱՄՆ դոլարը կամ 55.3%-ը արտարժութային պետական պարտատոմսերի գծով տոկոսավճարներն են, իսկ 53.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 44.7%-ը ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով տոկոսավճարներն են՝ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի գծով: ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով տոկոսավճարներում գերակշիռ մասը միջազգային կազմակերպությունների գծով տոկոսավճարներն են՝ 45.1 մլն ԱՄՆ դոլար կամ 85.0%:

2016 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով փաստացի մարումները կազմել են 71.1 ԱՄՆ դոլար, որից 52.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 73.1%-ը միջազգային կազմակերպությունների գծով մարումներն են, որից 27.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 51.9%-ը միայն Զարգացման միջազգային ընկերակցության (IDA) մարմանն ուղղված գումարներն են:

2016 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով մարումների ընդհանուր գումարից 18.3 մլն ԱՄՆ դոլարը կամ 25.8%-ը օտարերկրյա պետությունների գծով մարումներն են, որից 9.3 մլն ԱՄՆ դոլարը կամ 50.7%-ը Ճապոնիային վճարված մարումներն են:

ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

2016 թվականի ՀՀ արտաքին պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 45.6% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի սահմանը: Բոլոր հինգ ցուցանիշներով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր: (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	*Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի*	*Փաստացի ցուցանիշներ*	
		2015	*2016*
ՀՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >80%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ < 48%	34.20%	37.90%
ՀՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >220%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <132%	114.90%	114.30%
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >30%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 18%-30%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <18%	12.50%	6.60%
Տոկոսավճար /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ > 20%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 12%-20%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրնե <12%	3.30%	3.60%
Արտաքին պետական պարտք/Ար-տահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >275%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 165%-275%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <165%	137.60%	137.30%
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման՝ 50.00%	41.00%	45.60%
ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ	Սահման՝ 22.5%	16.00%	9.40%

<u>Եզրահանգումներ</u>

ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով առաջարկում ենք.

1. ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև Հաշվետվություններում բացակայում են ըստ եկամտատեսակների հարկային եկամուտների ծրագրավորված ցուցանիշները: Արդյունքում ըստ եկամտատեսակների եկամուտների փաստացի ցուցանիշների վերլուծություն լիարժեք չի իրականացվում:
2. Կադաստրը պետական կառավարչական հիմնարկ է և Կադաստրի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտները պետք է մուտքագրվեն պետական բյուջե և Կադաստրի պահպանման ու կարողությունների զարգացման ծախսերը պետք է կատարվի պետական բյուջեի միջոցների հաշվին:
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ԾԻԳ-երի հաշիվների նկատմամբ գանձապետարանն իրականացնի նախնական հսկողություն,
4. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին և Հիմնադրամներին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 30-ին կատարվել է փոփոխություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետում և արդեն, ըստ այդ օրենքի, գանձապետական միասնական հաշիվը ներառում է նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բանկային սպասարկման համար ենթահաշիվները: Սակայն, չնայած այն

հանգամանքին, որ արդեն երեք տարի է ինչ կատարվել է այդ փոփոխությունը, մինչ օրս ՊՈԱԿ-ների հաշիվները գտնվում են առևտրային բանկերում և չի պահպանվում օրենքի համապատասխան կետը:

5. «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 1) կետի համաձայն, ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը ներառել ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսում:

Հաշվի առնելով եզրակացաությամբ ներկայացված ուսումնասիրություններն ու նկատառումները, ՀՀ վերահսկիչ պալատը գտնում է, որ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն համապատասխանում են «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին և արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: